ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073- 36

0231-6-09-36

11 մարտի 2013թ.

գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվար ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հ.Ա.Ա. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
Գրանցման թիվ 2549-13
«13» 02 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01 փետրվարի 2013 թ. Թիվ 1

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում ստեղծել **հանձնաժողով՝** համաձայն հավելվածի:
2. ՈՒժը կորցրած ճանաչել Արշալույս համայնքի ղեկավարի 2011թվականի մարտի 3-ի թիվ 5 կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 1
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ղեկավարի
2013 թվականի փետրվարի 1-ի
թիվ 1 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Գագիկ Շահգալդյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արտավազդ Ասատրյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ

Հանձնաժողովի անդամներ՝

Օնիկ Սարգսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն

Ասատուր Սերոբյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2013թ. Թիվ 2/1

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին>> N 12-Ն հրամանով հաստատված N2 հավելվածի 8-րդ կետով, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի փետրվարի 25-ին ժամը 14:00-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովում լիազորված անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Առաքելյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 1
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2013թ. Թիվ 3

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Ժենիկ Արմենակի Ալեքսանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել և ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 1 փողոցի 16 հասցեում գտնվող՝ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, 208.6 ք/մ բնակելի տանը և օժանդակ շինություններին կից 4.2 ք/մ կաթսայատան, 59.2 ք/մ մառանը, 19.5ք/մ անասնաշենքը, 20.2 ծածկոցը, 1.9 ք/մ պարիսպը, 279.9 ք/մ ջերմատունը, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 1483.6 քառակուսի մետր, համայնքի բնակիչ Ժենիկ Արմենակի Ալեքսանյանի /ծնված 00.00.1935թ./, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 8
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2013թ. Թիվ 4

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Նորիկ Ռաֆիկի Նիկողոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել և ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 1 փողոցի 14 հասցեում գտնվող՝ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, 127.3 ք/մ բնակելի տանը և օժանդակ շինություններին կից 7 ք/մ պարիսպը, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 1500.0 քառակուսի մետր, համայնքի բնակիչ՝ Նորիկ Ռաֆիկի Նիկողոսյանի, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 15
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվարի 2013թ. Թիվ 6

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Գևորգ Միասնիկի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել և ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 15 փողոցի 8 հասցեում գտնվող՝ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, 107.8 բ/մ բնակելի տանը և օժանդակ շինություններին կից 33.5 բ/մ անասնաշենքը, 16.7 ծածկոցը, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 1900.0 քառակուսի մետր, համայնքի բնակիչ Գևորգ Միասնիկի Գևորգյանի /ծնված 01.01.1963թ./, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 27
գ. Արշալույս

[redacted]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2012թ. Թիվ 7

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 15 փողոցի թիվ 8 հասցեում գտնվող Գևորգ Միասնիկի Գևորգյանին /ծնված 01.01.1963թ./ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 300 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1900 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, որը կառուցվել է 1958թվականին:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Գևորգ Միասնիկի Գևարգյանին /ծնված 01.01.1963թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի փետրվարի 27
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

19 փետրվարի 2013թ. Թիվ 5

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 01/11/4375-12 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչների բարձր կադաստրային գին ունեցող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը փոխադրել ավելի ցածր կադաստրային գին ունեցող հողատեսքի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013թվականի փետրվարի 19
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ղեկավարի
2013 թվականի փետրվարի 19-ի N 5 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱՐԵԼՈՒ

ՀՀ	ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ	ՀԱ	ՀՈՂԱՏԵՍՔԸ	
				ՆԱԽԿԻՆՈՒՄ	ՆԵՐԿԱՅՈՒՄՍ
1	Գևորգյան Արմեն	355-003	0.75	պտուղ	վարելահող
2	Սարգսյան Սարգիս	255-002	0.38	խաղող	վարելահող
3	Սարգսյան Սարգիս	256-002	0.38	խաղող	վարելահող